ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IV, № 8, 1951 Биол. и сельхоз. науки

Ա. Ե. Թառչյան

# ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ՆՈՐ ՍՈՐՏԻ «ԵՂՎԱՐԴԻ 4-Ի» ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտը 1938 թվից լայն աշխատանք է ծավալել ցորենների ներսորտային խաչաձևումների բնագավառում.

Մի շարք գյուղերում ներսորտային խաչաձևումները կատարվել է տեղական պոպուլյացիոն ցանքսերի վրա, որի հետևանքով ստացվել են հիբրիդներ։

Նպատակ ունենալով ուսումնասիրելու պոպուլյացիայի միջավայրում փոշու ազատ ընտրողականության պայմաններում ստացված հիբրիդային սերնդի հատկանիշների ժառանգականության դինամիկան և դրան զուգընթաց, որպես գործնական արդյունք ստանալ նրանցից ցորենի նոր բարձր բերքատու սորտեր, նույն ինստիտուտի աշխատակիցներ բիոլոգիական գիտությունների թեկնածուներ Ա. Ա. Միրաչյանը և Ա. Հ. Եղիկյանը բազմաթիվ կոմբինացիաների պոպուլյացիոն ցանքսերի միջից ընտրել են այդպիսի շատ հասկեր։ Ընտրության օբեկտ է եղել նաև Արտաշատի շրջանի Կարակոյուն գյուղի այն դաշտը, որի նույն թվի ապրոբացիոն ակտում արձանագրված է պոպուլյացիայի հետևյալ կազմը։ Տուրցիկում, որը պոպուլյացիայի հիմնական մասն է, կազմում է 75 տոկոս, իսկ մնացած 25 տոկոսի մեջ մտնում են 11 ուրիշ տարատեսակներ, այդ թվում համագանիկում, գրեկում, Դելֆի, հոստիանում, էրիտրոսպերմում և այլն։

Եղման նյութի հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եթե սեփական փոշուց զրկված հասկերից շատերը ընդունել են ոչ թե իր տարատեսակի, այլ պոպուլյացիայի կազմի այլ կոմպոնենտի փոշին և այդպիսի հիբրիդների ճեղքավորումը սկսվել է դադարել ավելի շուտ երրորդ սերնդում։

Այդպիսին է եղել նաև Արտաշատի շրջանի վերոհիշյալ գյուղի կաստրացիայի ենթարկված պոպուլյացիայից առանձնացված գրեկում տեսակին պատկանող հասկերը (մայր), որոնցից մեկը գնացել է եղման նյութի հերթական 4-րդ համարի տակ. այդ գիծը դադարել է ճեղքավորումից $F_3$-ում, որը հետագա սերունդներում բազմաթիվ այլ գծերի, ինչպես նաև պոպուլյացիայի կազմում եղող տարատեսակների համեմատությամբ աչքի է ընկել մի շարք առավելություններով։

Ստացված մի շարք նոր գծեր, իրենց ծնողական հատկանիշներից ելնելով, որոշ խմբավորումների ենթարկվեցին և դաստիարակման դրվեցին Հայաստանի տարբեր զոնաների մեջ մտնող 6 շրջաններում.

Նախալեռնային չոր գոտու պայմաններում դաստիարակման համար առանձնացված գծերը 1946 թվից ցանվեցին Աշտարակի շրջանի Եղվարդ

գյուղի ընկեր Ստալինի անվան կոլտնտեսության կից պետական փորձադաշտի պայմաններում։

Այդ գոտայի մեջ մտնող Եղվարդ գյուղում դաստիարակման և փորձարկման դրված նոր ձևերի թվում էր նաև ներտեսակային խաչաձևումների մատերիալից ստացված գրեկում × տուրգիդում 4-րդ համարի տակ գնացող հիբրիդային ձևը, որը հիմնավորապես դաստիարակվեց Եղվարդի պայմաններում, որի համար էլ հետագայում կոչվեց «Եղվարդի 4»։

Բոլոր ձևերի փորձարկումները տարվել են Միութենական Գյուղատնտեսական Մինիստրությանը կից հացահատիկային կուլտուրաների սորտաստուգման պետ. հանձնաժողովի մշակած մեթոդիկայով. քառապատկությամբ կրկնողությունների թվից, որը մեկի փոխարեն վերցված է չորս։

Փորձարկման բոլոր տարիներում, որպես ստուգիչ համեմատաբար ցանվել է այդ գոտայի համար շրջանացված, տեղական հինավուրց գրեկում տեսակին պատկանող սորտը։ № 1 աղյուսակում բերում ենք 1946—1950 թվերի փորձարկումների բերքատվության տվյալները։

Աղյուսակ 1

1946—1950 թվերի բերքատվության տվյալները
Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի փորձադաշտում

| Սորտի կամ ձևի անվանումը | Բերքը մեկ հեկտարից ցենտներով | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1946 թ. | 1947 թ. | 1948 թ. | 1949 թ. | 1950 թ. | միջինը | տոկոսային հարաբեր. |
| «Եղվարդի 4» | 42,2 | 31,0 | 36,7 | 7,5 | 29,6 | 29,4 | 118,5 |
| Տեղական գրեկում | 35,1 | 22,9 | 28,6 | 10,1 | 27,5 | 24,8 | 100 |

Միևնույն հողակլիմայական պայմաններում ստուգումներից ստացված տվյալները ցույց են տալիս, որ «Եղվարդի 4-ը» 5 տարվա միջին բերքատվությամբ 4,6 ցենտներով ավել բերք է տվել յուրաքանչյուր հեկտարից, տեղական գրեկումի նկատմամբ. բաց որում փորձարկման 1949 տարում 2,6 ցենտներով հետ է մնացել տեղականից։

Պետք է նշել, որ այդ տարին բացառիկ աննպաստ էր ընդհանուր առմամբ այդ գոտայի համար, և մասնավորապես Եղվարդի կոլտնտեսության համար։

Այսպիսի բացառիկ վատ պայմաններում «Եղվարդի 4-ը» հետ մնաց տեղական գրեկումից, իսկ համեմատաբար բարձր ագրոտեխնիկայի պայմաններում, ինչպես ցույց են տալիս տվյալները նրա տարբերությունը ավելի քան մեծանում է։

Հասկանալի է, որ միևնույն պայմաններում միաժամանակ ցանված երկու սորտ, եթե միանման բերք չեն տալիս, ապա այդ տարբերությունը հետևանք է տեսակների ներքին բնույթի, նրանց կենսունակության։

Այդ նպատակով մենք կատարեցինք մի շարք անալիզներ, որոնց տվյալները բերում ենք № 2 աղյուսակում։

Փորձարկումների մարգերից վերցված մետրիկաների 1946—1950 թվերի անալիզները ցույց են տալիս, որ տեղական գրեկումի լրիվ և պրո-

ցուկոտիվ թփակալության էլեմենտներն ավելի բարձր են, քան «Եղվարդի 4-ինը»։ Տեղական գրեկումը տալիս է 1,93 լրիվ և 1,82 պրոդուկտիվ թփակալություն, իսկ «Եղվարդի 4-ը» 1,37 լրիվ և 1,26 պրոդուկտիվ թփակալություն։

Հասկերի հինգ տարվա անալիզները ցույց են տալիս, որ տեղական գրեկումի 100 հասկի հատիկները կշռում են 58,3 գրամ, իսկ «Եղվարդի 4-ի» 92,7 գրամ, որը գրեկումի համեմատությամբ կազմում է 158,6 %։

Աղյուսակ 2.

«Եղվարդի 4-ի» և տեղական գրեկումի մասրաժկաններից վերցրած բույսերի անալիզների տվյալները ըստ տարիների

| | Տարեթիվ | Հասկ տվող բույսերի քանակը 1 մ²-ում | 100 բույսի անալիզը — թփակալություն — լրիվ | 100 բույսի անալիզը — թփակալություն — պրոդուկտիվ | Բույսերի միջին բարձրությունը սմ-ով | 100 հասկի հատիկների կշիռը գրամով | Հատիկների միջին թիվը մեկ հասկում | 1000 հատիկի կշիռը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Եղվարդի 4» | 1946 | 345 | 1,54 | 1,45 | 107 | 121,7 | 25,4 | 48,0 |
| | 1947 | 320 | 1,38 | 1,25 | 116 | 100,6 | 22,2 | 45,4 |
| | 1948 | 336 | 1,45 | 1,28 | 98 | 109,2 | 28,0 | 39,3 |
| | 1949 | 221 | 1,22 | 1,12 | 85 | 34,0 | 9,1 | 38,0 |
| | 1950 | 302 | 1,27 | 1,20 | 101 | 98,0 | 22,0 | 45,2 |
| 5 տարվա միջինը | | 305 | 1,37 | 1,26 | 101 | 92,7 | 21,3 | 43,2 |
| Տեղական սորտ (գրեկում) | 1946 | 435 | 1,90 | 1,78 | 101 | 80,1 | 23,4 | 34,3 |
| | 1947 | 459 | 1,78 | 1,69 | 110 | 50,3 | 13,2 | 39,3 |
| | 1948 | 447 | 2,02 | 1,80 | 119 | 65,2 | 18,8 | 35,3 |
| | 1949 | 325 | 1,95 | 1,86 | 92 | 29,5 | 10,0 | 36,1 |
| | 1950 | 412 | 2,00 | 1,96 | 99 | 66,0 | 17,0 | 38,8 |
| 5 տարվա միջինը | | 416 | 1,93 | 1,82 | 104 | 58,3 | 16,5 | 35,8 |

Հատկանշական է նաև հատիկների բացարձակ կշիռները, հինգ տարվա միջինը տեղական գրեկումի մոտ կազմում է 35,8 գրամ, իսկ «Եղվարդի 4-ինը» 43,2 գրամ կամ 120,7 %։

Ինչպես տեսնում ենք, «Եղվարդի 4-ը» հասկերի մեծությամբ, նրանցում եղած հատիկների թվով, ինչպես և հատիկների բացարձակ կշռով գերազանցում է տեղականին, իսկ լրիվ և պրոդուկտիվ թփակալությամբ հետ է մնում նրանից։

Միևնույն պայմաններում աճած Եղվարդի և տեղական գրեկումի թփակալությունը նույնը չէ. սա իրենց ներքին հատկության հետևանքն է, այդ պատճառով նրանք իրենց տրամադրության տակ ունեցած սննդանյութերը տարբեր ուղղությամբ են ծախսում. տեղական գրեկումը ավելի շատ սննդանյութեր է գործադրում նոր ցողունների վրա, զրկելով առաջին գեներատիվ օրգաններին սննդանյութերի անհրաժեշտ պահանջից, իսկ մյուսը այդ նյութերը ուղղում է գլխավորապես դեպի նոր կազմակերպվող հասկերը, որի շնորհիվ առաջանում է խոշոր հասկեր, շատ հատիկներ պարունակող հասկիկներով և խոշոր հատիկներով։

Անկասկած այս «Եղվարդի 4-ի» բիոլոգիական առանձնահատկություններից մեկն է, որը նրան հնարավորություն է տալիս բարձր բերք տալու

Համեմատաբար թույլ թփակալվելու հատկանիշը, սննդարար նյութերի հոսանքը կարգավորելուց բացի, «Եղվարդի 4-ին» տալիս է այն առավելությունը, որ յուրաքանչյուր բույս ստանում է յուրյան ավելի մեծ բաժին, դրա շնորհիվ ցողունները ավելի ամուր են լինում, կայուն և դիմացկուն քամիների հարվածներին. Այդ ավելի քան ակներև դարձնելու համար բերում ենք փորձարկման բոլոր տարիներում պառկածության վերաբերյալ դիտողությունների տվյալները։

Աղյուսակ 3

*«Եղվարդի 4-ի» և տեղական գրեկումի պառկածության տվյալները ըստ տարիների*

| Սորտի անունը | Պառկածությունը բալերով ըստ տարիների[1] | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1946 | 1947 | 1948 | 1949 | 1950 | Միջինը |
| Եղվարդի 4 | 4,5 | 4,5 | 5 | 5 | 4,5 | 4,7 |
| Տեղական գրեկում | 3,5 | 3,0 | 3,8 | 5 | 4 | 3,9 |

Առանձին տարիների պառկածության տվյալները որոշակիորեն ցույց են տալիս, որ բարձր բերքի տարիներում պառկածության աստիճանը տեղական գրեկումի մոտ ավելանում է, իսկ քիչ բերքատվության տարիներում այն մեղմանում է, երբեմն նաև հավասարվում «Եղվարդի 4-ին»։



Նկ. 1. Վերևի շարքում տեղական սպիտակահատ (գրեկում) հատիկները տարբեր դիրքով և կտրվածքը։ Ներքևի շարքում «Եղվարդի 4»-ի հատիկները և կտրվածքը։

«Եղվարդի 4-ի» բարձր բերքատվության հատկանիշները պահանջ առաջացրին այն արագ կերպով բազմացնելու և միաժամանակ արտադրական փորձարկումների մեջ մտցնելու համար. Այդ նպատակով 1948 թվին ունեցած 130 կիլոգրամ սերմացուն ցանվեց երկու հեկտարի վրա, որից մեկը Եղվարդում, իսկ մյուսը էքսպերիմենտալ բազայում.

[1] Հաշվառումները տարվել են 5 բալլյան սիստեմով։



Նկ. 2. «Եղվարդի 4-ի» և տեղական ալբոսպերմումի հասկերը բնական մեծու-թյամբ։ Ձախ կողմում «Եղվարդի 4-ի» հասկը, հասկիկը, հասկիկային թեփուկը և հատիկները։ Աջ կողմում տեղական ալբոսպերմումի հասկը, հասկիկային թեփուկը և հատիկները։

1949—50 գյուղատնտեսական տարում արդեն արտադրական փորձարկումները դրվեցին 1 հեկտար Եղվարդի կոլտնտեսությունում, որից 3-ը փորձադաշտում, 2 հեկտար Նաիրիի շրջանի Ալունքի կոլտնտեսությունում, 2 հեկտար նույն շրջանի Զառի կոլտնտեսությունում և 2,3 հեկտար էքսպերիմենտալ բազայում։

Ստորև բերում ենք 49—50 գյուղատնտեսական տարվա արտադրական փորձարկումների բերքատվության տվյալները։

Աղյուսակ 4

«Եղվարդի 4-ի» 40—50 ցորենի սորտի արտադրական փորձարկումների արդյունքները

| Շրջան | Գյուղերի անունները | Ցանքսի տարածությունը հեկտարներով | | Բերքը մեկ հեկտարից ցենտներով | |
|---|---|---|---|---|---|
| | | «Եղվարդի-4»ը | տեղական | «Եղվարդի-4»ը | տեղական |
| Աշտարակ | Եղվարդ | 2 | 2 | 9,9 | 9,3 |
| | Եղվարդի փորձադաշտ | 2 | 2 | 19,3 | 19,3 |
| | Ակունք | 2 | 2 | 15,6 | 12,3 |
| Կոտայք | Զառ | 2 | 2 | 28,1 | 22,0 |
| Բերդ | Էր. բազար | 2,3 | 1 | 29,9 | 15,5 |

Արտադրական փորձարկումների ընթացքում երևան եկան «Եղվարդի 4-ի» նոր հատկանիշներ։

Դրանցից ամենակարևորը տարբեր հողային պայմաններում բերքի կազմակերպման դինամիկան է։

Մանր փորձերի ժամանակ որպես կանոն փորձը դրվում էր իր ստուգիչի հետ միասին հողային միևնույն պայմաններում. այս դեպքում բնականաբար որոշ չափով իրար նման չէին միայն տարբեր տարիների մետեորոլոգիական պայմանները, որոնք ինչպես տեսանք, ինչքան նպաստավոր էին բարձր բերքի համար, այնքան ավելի մեծ էր «Եղվարդի 4-ի» տարբերությունը տեղականից և ընդհակառակը։ Արտադրական փորձարկումների ժամանակ առկա դարձավ նաև հողերի տարբեր բերրիության փաստը, այսինքն՝ «Եղվարդի 4-ը» իր ստուգիչի հետ դրվեցին տարբեր ագրոտեխնիկայի և հողի տարբեր բերրիության պայմաններում, որոնցում ստացված բերքի տվյալները բերված են № 4 աղյուսակում։

Այդ թվերը ցույց են տալիս, որ Եղվարդի կոլտնտեսության դաշտում, տեղականի և «Եղվարդի 4-ի» բերքատվության տարբերությունը կազմում է 0,6 ցենտներ, Ակունքում՝ 3,3, իսկ Զառում՝ 6,2 ցենտներ, Եղվարդի փորձադաշտում տարբերություն չկա։

Արտադրական մասշտաբի փորձերից ստացված այս տվյալները ցույց են տալիս, որ քանի բարձր է ագրոտեխնիկան, ինչքան ուժեղ է հողը, որքան հզոր է նրա բերք ստեղծելու հնարավորությունները, և ինչքան բարձր է բերքը, այնքան ավելի մեծ է բերքատվության տարբերությունը «Եղվարդի 4»-ի և տեղական ցորենի միջև։ Այդ ցույց է տալիս, «Եղվարդի 4»-ի այն հատկությունը, որ նա բերքի միջավայրում կարողանում է ավելի շատ, համեմատաբար բարձր օրգանական նյութեր պատրաստել, քան տեղական սորտը։

Բազմաթիվ փորձերից հայտնի են, որ հացահատիկների, ինչպես նաև այլ կուլտուրաների սորտերն ու այլատեսակները միատեսակ վերաբերմունք չեն ցույց տալիս հանդեպ սննդի պայմանների փոփոխությունը. ապացուցված է, որ միջավայրի սննդի կոնցենտրացիան փոխելով, այսինքն

հողի բերրիությունը բարձրացնելիս շատ սորտեր և այլատեսակներ բերքատվության իրենց տեղը չեն պահպանում։

Այս իսկ տեսակետից էլ սորտերի դեպի բերրիությունը ունեցած վերաբերմունքի ճիշտ ճանաչողությունը հնարավորություն կտա ընտրելու այնպիսիները, որոնք ցանքաշրջանառության խոտադաշտային սիստեմի յուրացման և պարարտանյութերի լայն գործադրման միջոցով ստեղծված հողի բերրիության բարձր մակարդակի պայմաններում ընդունակ կլինեն յուրացնելու սնման խիտ ֆոնը, և ապահովելու կոլխոզային դաշտերի բարձըր ու կայուն բերքատվությունը։

Աննախընթաց կերպով բարձրացող ագրոտեխնիկայի պայմաններում, Սովետական Հայաստանի չոր նախալեռնային շրջանների համար հրապարակի վրա եղած սորտերից «Եղվարդի 4-ը» շատ ավելի հեռանկարային է. Նա բերրի միջավայրում շատ ավելի սննդարար նյութեր է պատրաստում և լիարժեք կերպով կարող է փոխարինել տեղական սպիտակահատին։

Եղվարդի 4-ի հասկերը սպիտակ են, քիստավոր, առանց մազմզուկների. հատիկները սպիտակ. նման հատկանիշների համատեղ արտահայտությունը գոյություն ունեցող սիստեմատիկայի համաձայն նշանակում է tr. vulgare var. graecum։ Ինչպես տեսնում ենք սրանք բոլորը մայրական ձևից ժառանգած հատկանիշներ են։ Բայց նա որոշ կողմերով տարբերվում է գրեկումից։ Հայտնի է, որ գրեկումը գարնանացան ձև է, իսկ «Եղվարդի 4-ը» մաքուր աշնանացան է, 37 օրվա յարովիզացիայի տևողությամբ, որը որոշվել է Վ. Հ. Գուլքանյանի կողմից։ Բացի այդ, գրեկումը մազմզուկներ չունի իսկ «Եղվարդի 4-ի» մոտ մազմզուկությունը զգալի արտահայտված է մինչև 3—4-րդ տերևը, ապա սկսում է թուլանալ, բոլորովին չարտահայտվելով հասկերի վրա։ Բացի այդ յուրահատուկ է «Եղվարդի 4-ի» հատիկների գույնը։ Գրեկումը ունի սպիտակ հատիկներ ալրանման կտրվածքով, իսկ «Եղվարդի 4-ի» հատիկները նույնպես սպիտակ են, բայց ունեն բնորոշ կարմրավուն փայլ և ապակենման կտրվածք։

Ինչպես այս տարբերությունները, նույնպես և մինչև F 3-ը. հիբրիդի ճեղքավորած մասնակիցի անալիզները, ցույց են տալիս, որ «Եղվարդի 4-ի» հայրական ձևը եղել է tr. vulgare var turcicum-ը, որից և ժառանգել է ինչպես աշնանացանությունը, տերևների մազմզուկավորությունը նույնպես և հատիկների գույնը։

Հայտնի է, որ ցորենների ալյուրաղացման, ալյուրի ելքի, հացաթխման ինչպես և հացի որակի հատկանիշները սերտ կապի մեջ են նրանց բիոքիմիական կազմի հետ. այդպիսի անալիզներ 4-ի հետ դեռևս չեն կատարված, բայց տարբեր սորտերի հացի որակը պարզելու կապակցությամբ պետ. հանձնաժողովի կողմից կազմակերպված բազմաթիվ սորտերի դեգուստացիաներում «Եղվարդի 4-ը» միշտ գերազանց գնահատական է ստացել։

Այժմ «Եղվարդի 4-ը» Սովետական Հայաստանի նախալեռնային զոնայի մեջ մտնող 5 շրջանների 14 կետում 98 հեկտարի վրա դրված է մասսայական արտադրական փորձարկումների և բազմացման այն հաշվով, որ 1951 թ. աշնանացանում այն բռնի առնվազն 1500 հեկտար տարածություն.

«Եղվարդի 4-ի» դրական հատկանիշների հետ միասին պետք է արձանագրել նաև նրա երկու թերի կողմերը, որոնք փորձարկման առաջին տա-

րիներում թույլ արտահայտված լինելու պատճառով չի նկատվել, իսկ այժմ իրենց զգալ են տալիս։

Դրանից մեկը այն է, որ հասունանալուց հետո հասկի առանցքը և թեփուկները զգալի կերպով կոշտանում են, որի պատճառով կալսելիս հատիկները հեշտությամբ չեն անջատվում։ Այս երևույթն արձանագրված է 1948—49 գյուղ. տարում, ինչպես նաև 50 թվին Ակունքի և Զառի արտադրական փորձարկումներում։ Այսպես օրինակ Ակունքի կոլտնտեսությունում 2 հեկտարի բերքը կալսելով կալսումից հետո Թևաց «Եղվարդի 4-ից» 120 կգ. չկալսված հասկեր, իսկ նույնքան տարածությունից սատուրիկից 47 կգ.։ Զառ գյուղի կոլտնտեսությունում նույնքան տարածություն կոմբայնով հնձից Թևաց չկալսված հասկեր «Եղվարդի 4-ից» 220 կգ., իսկ սատուրիկից 90 կգ.։

Այս հանգամանքը մեկ կողմից լավ է, որ հատիկների թափվելու և բերքի կորուստի վտանգ չկա, բայց վատ է, որ կալսումից հետո Թևացած հասկերը լրացուցիչ աշխատանք են պահանջում։

Մյուս բացասական կողմը դա փոշեմբրիկով վարակվելու հակումն ունենալու հանգամանքն է. ճիշտ է, այդ մինչ այժմս այն աստիճան քիչ է եղել, որ հնարավոր չի եղել հաշվառման ենթարկելու, բայց երևույթը ինքնին է որպես փաստ, որի վրա ուշադրություն պետք է դարձնել։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշնանացան ցորենի նոր սորտ «Եղվարդի 4-ը», որը տեղական հինավուրց երկու այլատեսակների ազատ ընտրողականության պայմաններում կատարված խաչաձևումից ստացված նոր օրգանիզմ է, և դաստիարակվել է նախալեռնային չոր գոտու պայմանների համար, իր մեջ կրում է մի շարք այնպիսի հատկանիշներ, որոնք գերազանցում են այդ գոտում մշակվող տեսակներին։

«Եղվարդի 4-ի» լավագույն հատկանիշներից առաջինը նրա աշնանացանությունն է. այս կարևոր է հատկապես այն պատճառով, որ մինչև այժմս էլ, այդ գոտու համար աշնանացան ցորենի սորտեր չկան. այն ինչ որ ցանվում է աշնանը (գրեկում, դեռֆի, բուրբիցեսա) բոլորն էլ գարնանացան սորտեր են, որոնք որպես այդպիսին միշտ ենթակա են ցրտահարման վտանգի։

«Եղվարդի 4-ը» կոնկուրսային փորձարկման 1946—1950 թվերի ընթացքում տեղականի համեմատությամբ տվել է 4—6 ցենտներ, իսկ 1949—50 թվի արտադրական փորձարկումներում 3-ից-14 ցենտներ ավել բերք յուրաքանչյուր հեկտարից։

«Եղվարդի 4-ը» բարձր ագրոտեխնիկայի և հողերի բերրիության պայմաններում, ավելի է բարձրացնում բերքատվությունը. այդ բերրիությունը գնում է ոչ թե նոր ցողուններ տալու՝ այլ հասկերը խոշորացնելու, հասկիկների թիվը շատացնելու, հատիկները մեծացնելու ուղղությամբ, և որպես հետևանք այս բոլորին բարձրանում է հատիկների որակը որպես սերմացուի և նրանց քիմիական կազմը որպես սննդի միավորի։

Հատկանիշների այսպիսի դրական տարբերությունը, որը ունի «Եղվար-

դի 4-ը» տեղական սպիտակահատի (գրեկումի) նկատմամբ, ասում է այն մասին, որ նա կարող է դառնալ Սովետական Հայաստանի նախալեռնային չոր գոտայում մշակվող հիմնական աշնանացան ցորենի սորտ։

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտ

Ստացվել է 21 V 1951

А. К. Торчян

## Результаты испытания нового сорта озимой пшеницы „Егварди-4"

### Резюме

Новый сорт озимой пшеницы „Егварди-4"—результат скрещивания двух местных, старых разновидностей—получен путем свободного отбора, скрещивания для почв предгорной зоны.

„Егварди-4" содержит в себе ряд таких особенностей, которые превосходят виды, культивируемые в этой зоне.

Одной из главных особенностей „Егварди-4" является его озимость. Это важно и по той причине, что в предгорной зоне не имеется сортов озимой пшеницы.

На конкурсных испытаниях в течение 1946—1950 гг. „Егварди-4", по сравнению с местными сортами, дал на 4,6 центнера больше урожая, а во время производственных испытаний 1949—1950 гг. с каждого гектара дал от 3 до 14 центнеров больше урожая. В условиях высокой агротехники и плодородия почвы у „Егварди-4" укрупняются колосья, умножаются колоски, увеличиваются зерна и в результате повышаются семенное качество зерна, его химическое содержание и урожайность.

Положительные качества, которыми отличается „Егварди-4" от местного сорта Спитакаат (грекума), говорят за то, что он может стать основным сортом озимой пшеницы для сухой, предгорной зоны Советской Армении.